ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/09

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Սլացք» ՓԲԸ-ի 29.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Սլացք» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Սլացք» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 29.05.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Մեր ընկերությունը 2010 թվականի հոկտեմբեր ամսից զբաղվում է «Շարժական դաշտային բաղնիք»-ի ստեղծման հետ կապված ինժեներական աշխատանքներով: Այդ կապակցությամբ իրականացվել են հետազոտական աշխատանքներ այդ ոլորտի համաշխարհային փորձի ուսումնասիրման, հայտնաբերված կառուցվածքների թերությունների բացահայտման և դրանց վերացնելու հետ կապված լուծումների մշակման վերաբերյալ: Իրականացված տեսական և փորձնական աշխատանքների արդյունքում ստացել ենք «Շարժական դաշտային բաղնիք»-ի նոր կառուցվածք, որը ամբողջովին ինքնավար է և որի տրանսպորտային վիճակից աշխատանքայինին անցնելը կլինի արագ և դյուրին և ապահովի միաժամանակյա մեծ քանակությամբ մարդկանց

լողանալու հնարավորությունը: Քանի որ ստացված կառուցվածքը ամբողջովին նոր էր և արդյունաբերորեն կիրառելի, որոշեցինք դիմել ՀՀ մտավոր սեփականության գործակալություն այդ լուծումը արտոնագրելու համար: Հայտը ներկայացրել ենք 11.11.2011թ.: Փորձաքննության ավարտից հետո Մտավոր սեփականության գործակալությունը որոշում է ընդունել մեր կողմից ներկայացված «Շարժական դաշտային բաղնիք»-ի կառուցվածքին տալ արտոնագիր (N 297 U (արտոնագրի պատճենը կցվում է)):»:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից շարժական դաշտային բաղնիքի կահավորման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1 բաց ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող աշխատանքը հանդիսանում է իրենց իսկ կողմից ստեղծված շարժական դաշտային բաղնիքի կահավորման տեխնիկական բնութագիրը:

Ընկերությունը մեջբերել է «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը: Մասնավորապես.

«Գյուտի կամ օգտակար մոդելի արտոնագրով արտոնագրատիրոջը բացառիկ իրավունք է տրվում արտոնագրված օբյեկտն օգտագործելու իր հայեցողությամբ, ինչպես նաև երրորդ անձանց արգելելու՝ եթե արտոնագրի առարկան արտադրանք է՝ առանց իր թույլտվության պատրաստել, օգտագործել, առաջարկել վաճառքի, վաճառել կամ այդ նպատակով ներմուծել այդ արտադրանքը:»:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն նշված ընթացակարգը պետք է կազմակերպեր ոչ թե բաց ընթացակարգով, այլ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված ձևով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու՝ բանակցային ընթացակարգով:

Ընկերությունը որպես իրավական հիմք նշել է, որ Պատվիարատուի կողմից խախտվել է «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջները:

Վերոգրյալով պայմանավորված՝ ընկերությունն եզրահանգել է, որ նշված պայմանագրի կնքումն անօրինական է:

Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ նմանատիպ գործընթաց տեղի է ունեցել 2012 թվականին, ինչի հետևանքով Գնումների բողոքարկման խորհուրդը որոշում

է կայացրել բավարարել Ընկերության կողմից ներկայացված համապատասխան դիմումը (ԳԲԽ-25/12 որոշում (պատճենը կից ներկայացվում է)):

Ընկերությունը հայտել է նաև, որ հարցը լուծում չստանալու դեպքում իրավունք է վերապահում դիմել դատարան:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «Շարժական դաշտային բաղնիքի կահավորման աշխատանքների» կատարման պայմանագիր կնքելու մասին որոշումը և չեղյալ հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1» ծածկագրով գնման ընթացակարգը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1746 գրությամբ Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության կողմից տրամադրված եզրակացությունը՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի և «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված արտոնագրի պահանջների համեմատության վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1 ծածկագրով բաց ընթացակարգի առնչությամբ «Սլացք» ՓԲԸ-ի 29.05.2017թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1 ծածկագրով գնման գործընթացը չի իրականացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով, քանի որ ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Սլացք» ՓԲԸ-ին արտոնագրով տրված շարժական դաշտային բաղնիք օգտակար մոդելի նկատմամբ իրավունքը ՀՀ գործող օրենսդրության համաձայն չի դասվում հեղինակային և հարակից իրավունքների, ինչպես նաև այն օժտված չէ հատուկ կամ բացառիկ իրավունքով:

Ինչ վերաբերում է «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների կիրառմանը, ապա նշված դրույթները կարող են կիրառվել, եթե մասնագիտական եզրակացությամբ հաստատվի, որ գնման առարկա է հանդիսանում «Սլացք» ՓԲԸ-ին օգտակար մոդելի նկատմամբ իրավունքով պատկանող շարժական դաշտային բաղնիքը, սակայն ըստ ՀՀ

ՀՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետի տրված մասնագիտա
եզրակացության, մրցույթի է դրված ՀՀ ՊՆ-ի կողմից տրամադրված ավտոմեքենան
կունգերը լոգանք ընդունելու օժանդակ շարժական սարքերի /դաշտային շարժա
բաղնիք/ վերաձևավորելու աշխատանքների ձեռք բերումը, որը էականորեն տարբեր
է «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված N297 Ս արտոնագրով ներկայաց
ապրանքից»:

Պատվիրատուն նշել է նաև, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1 ծածկագրով մրցո
հրապարակվել է 13.04.2017թ.-ին և հայտերի բացումը տեղի է ունեցել 24.05.2017թ.,
ընթացքում շուրջ 40 օրից ավել «Սլացք» ՓԲԸ-ի կողմից որևէ բողոք կամ արձագան
եղել, ավելին, Ընկերությունը մասնակցել է ԲԸԱՇՁԲ-7/1 ծածկագրով մրցույթին և հա
մերժելուց հետո միայն բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության կողմից ՀՀ ՊՆ Ն
ԲԸԱՇՁԲ-7/1 ծածկագրով հանձնաժողովի նախագահին տրամադրված եզրակացությ
նշվել է հետևյալը.

««Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում եմ
սկսած 2013թ.-ից, «Սլացք» ՓԲԸ-ն, ՀՀ պաշտպանության նախարարության կո
տրամադրված /ԶԻԼ-131, Կամազ կամ ՈՒրալ մակնիշի/ ավտոմեքենաների կունգ
վերաձևավորել է դաշտային շարժական բաղնիքների և մատակարարել
պաշտպանության նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալու
կողմից 25.07.2012թ. հաստատված N297 Ս արտոնագրում տեխնիկական բնութ
փոխարեն ներկայացված է օգտակար մոդելի բացահայտումը և իրականացում
ներառված չէ ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչության կողմից մրցույթի ներկայաց
տեխնիկական բնութագրի պահանջները:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված կազմակերպության կողմից մինչ օրվ
պաշտպանության նախարարությանը մատակարարվել է 30 միավոր դաշտ
շարժական բաղնիքներ, որոնց տեխնիկական բնութագրերը համապատասխանե
2017թ. կարիքների համար ձեռք բերվելիք դաշտային շարժական բաղնիք
տեխնիկական բնութագրի պահանջներին, բացառությամբ սառը ջրի հա
նախատեսված բաքերի, որոնք արտադրվել են պողպատից, ներկայիս տեխնիկա
բնությագրով սահմանված՝ AISI 430 մակնիշի չժանգոտող պողպատի փոխարեն

Եզրակացություն.

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության կողմից եզրակացվել է, որ ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության կողմից մրցույթին ներկայացված տեխնիկական բնութագիրը տարբերվում է «Սլացք» ՓԲ ընկերության կողմից ներկայացված N297 Ս արտոնագրի պահանջներից:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱԴ ԳՓԶ վարչության բաժնի գլխավոր մասնագետներ Տիգրան Բաղդասարյանը և Գագիկ Ուստյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն ուսումնասիրել է «Սլացք» ՓԲԸ-ի 29.05.2017թ. ներկայացրած բողոքը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2017թ. ապրիլի 13-ի որոշմամբ հաստատված հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1746 գրությունը, ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության կողմից 07.06.2017թ. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահին տրամադրված եզրակացությունը, ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Սլացք» ՓԲԸ-ին տրված «Շարժական դաշտային բաղնիքի օգտակար մոդելի» N 297 Ս արտոնագիրը, ՀՀ մտավոր սեփականության գործակալության 19.06.2017թ. N26-81 գրությունը, Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների ներկայացրած դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը դաշտային շարժական բաղնիքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.04.2017թ. հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲԸԱՇՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց բողոքն ամբողջությամբ և հայտնեց, որ գտնում է, որ Պատվիարատուն գնման ենթակա առարկան բաց ընթացակարգով ձեռք բերելով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջները, քանի որ Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված գնման ենթակա առարկան հնարավոր է ձեռք բերել միայն

«Սլացք» ՓԲԸ-ից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային կամ հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:

Այսինքն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված է ոչ թե Պատվիրատուի պարտականությունը, այլ իրավունքը, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից այս կապակցությամբ ներկայացված ապացույցն անհիմն է:

Ընկերության Խորհրդին հայտնեց նաև, որ Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված գնման ենթակա առարկան ամբողջովին հանդիսանում է հանդիսանում է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Սլացք» ՓԲԸ-ին տրված «Շարժական դաշտային բաղնիքի օգտակար մոդելի» N 297 U արտոնագրով նախատեսված առարկան և այն այլ անձից ձեռք բերելու դեպքում կխախտվի «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գյուտի կամ օգտակար մոդելի արտոնագրով արտոնագրատիրոջը բացառիկ իրավունք է տրվում արտոնագրված օբյեկտն օգտագործելու իր հայեցողությամբ, եթե դա չի խախտում այլ արտոնագրատերերի իրավունքներն, ինչպես նաև երրորդ անձանց արգելելու՝ եթե արտոնագրի առարկան արտադրանք է՝ առանց իր թույլտվության պատրաստել, օգտագործել, շուկա մտցնել, առաջարկել վաճառքի, վաճառել կամ ներմուծել կամ նշված գործողություններից մեկի նպատակով ձեռք բերել (տիրապետել) այդ արտադրանքը:

Խորհուրդը մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով 16.06.2017թ. գրությամբ դիմել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության խնդրելով տրամադրել եզրակացությունյ այն մասին, արդյո՞ք Ընթացակարգի հրավերում ներառված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը հանդիսանում է թիվ 297 U արտոնագրում նշված առարկայի բնութագիրը, թե՝ ոչ:

ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը 19.06.2017թ. N26-81 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ գործակալության կողմից «Սլացք» ՓԲԸ-ին տրված AM 297U («Շարժական դաշտային բաղնիք») արտոնագրի գործողությունը, հետևաբար, գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքները դադարեցված են 12.11.2012 թվականից՝ արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրքը սահմանված ժամկետում չվճարելու հիմքով («Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետ):

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գյուտերի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի նկատմամբ տրամադրված իրավունքները դադարեցվում են, եթե արտոնագիրը կամ վկայագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրքը սահմանված ժամկետում չի վճարվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սլացք» ՓԲԸ-ին տրված AM 297 U արտոնագրով «Սշացք» ՓԲԸ-ին գյուտի նկատմամբ տրամադրված իրավունքները 12.11.2012թ. դադարեցված են, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից բողոքով ներկայացված նշված իրավական հիմքը առարկայազուրկ է:

Խորհուրդը հարկ է համարում նաև անդրադառնալ Ընկերության կողմից բողոքում նշված այն փաստին, որ նմանատիպ գործընթաց տեղի է ունեցել 2012 թվականին, ինչի հետևանքով Գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացրել բավարարել Ընկերության կողմից ներկայացված համապատասխան դիմումը (ԳԲԽ-25/12 որոշում):

Գնումների բողոքարկման խորհուրդը ԳԲԽ-25/12 որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները, քանի Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքվել է մինչև անգործության ժամկետը լրանալը, հետևաբար Խորհուրդը գտել է, որ նշված խախտման առկայության պայմաններում վերանում է բողոքում ներկայացված այլ պահանջների և հիմնավորումների քննարկման անհրաժեշտությունը:

Այսինքն, Ընկերության կողմից ներկայացված այն փաստը, որ նմանատիպ գործընթաց տեղի է ունեցել 2012 թվականին, ինչի հետևանքով Գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացրել բավարարել Ընկերության կողմից ներկայացված համապատասխան դիմումը՝ չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սլացք» ՍՊԸ-ի 29.05.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ